ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

11 ԱՊՐԻԼԻ 2025թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 8 անդամներ:

Բացակա էին՝ Ժորա Մարտիրոսյանը, Մանուկ Բաղդասարյանը, Արամ Մկրտչյանը, Սիրակ Հովակիմյանը, Արսեն Ստեփանյանը, Արամ Հովսեփյանը, Գարեգին Մարգարյանը

Քաղաքապետի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Տիգրան Պողոսյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Լիպարիտ Թադեվոսյանը

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 11-Ի՝ ՀԵՐԹԱԿԱՆ ԹԻՎ 05 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԼԻՊԱՐԻՏ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով, ***Գառնի համայնքի ավագանին որոշում է.***

Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքի ավագանու 2025 թվականի ապրիլի 11-ի՝ հերթական թիվ 05 նիստի հետևյալ օրակարգը.

1. Գառնի համայնքի Գեղադիր բնակավայրում միջնակարգ դպրոց կառուցելու մասին

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին

3. Համայնքի ղեկավարի հաղորդումը 2025 թվականի բյուջեի առաջին եռամսյակի կատարման մասին

4. Գառնի համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբարի 25-ի N 193-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

5. հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին

6. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 28-ի N 150-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

7. Ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման մասին

8. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի N 201-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

9. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքի ավագանու 2025 թվականի փետրվարի 11-ի N 20-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 66-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 11-Ի N 20-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԼԻՊԱՐԻՏ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի առաջին մասով, 34-րդ հոդվածի առաջին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով, ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Կոտայքի մարզի Գառնի համայնքի ավագանու 2025 թվականի փետրվարի 11-ի «Գառնի համայնքի գյուղ Գեղադիր 4-րդ փողոց 1 հասցեում գտնվող Սուրեն Վիրաբի Գասպարյանին սեփականություն համարվող անշարժ գույքը վարձակալելու

վերաբերյալ» N 20-Ա որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

2. Որոշման 1-ին կետում «Վարձակալել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքի Գեղադիր գյուղի 4-րդ փողոց, թիվ 1 հասցեում գտնվող՝ Սուրեն Վիրաբի Գասպարյանին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը, 1 տարի ժամկետով, ամսական 220 000 (երկու հարյուր քսան հազար) ՀՀ դրամ վարձավճարով, որն իր մեջ չի ներառում կիրառելի հարկերը և պարտադիր վճարումները, տարածքն օգտագործվելու է, որպես Գառնի համայնքի Գեղադիր գյուղի վարչական ղեկավարի գրասենյակ» բառերը փոխարինել «Վարձակալել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքի Գեղադիր գյուղի 4-րդ փողոց, թիվ 1 հասցեում գտնվող՝ Սուրեն Վիրաբի Գասպարյանին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքի 2-րդ հարկը 46.9քմ. մակերեսով շինությունը, 1 տարի ժամկետով, ամսական 220 000 (երկու հարյուր քսան հազար) ՀՀ դրամ վարձավճարով, որն իր մեջ չի ներառում կիրառելի հարկերը և պարտադիր վճարումները, տարածքն օգտագործվելու է, որպես Գառնի համայնքի Գեղադիր գյուղի վարչական ղեկավարի գրասենյակ» բառերով,:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Ավագանու անդամներ

ՏԻԳՐԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

ԿԱՐԵՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ԱԼԻԿ ԱԼՈՅԱՆ

ՆԱԻՐԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՐՏՅՈՄ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՀՄԱՅԱԿ ԱՂԱՋԱՆՅԱՆ

ՏԻՐԱՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Համայնքի ղեկավար՝ ՏԻԳՐԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Լիպարիտ Թադեվոսյանը_____